ISSN 0002-306X. ՀԳԱԱ և ՀԱՊՀ Տեղ. Տեխն. գիտ. սերիա. 2016. Հ. LXIX, N 1.

ՅՈՒՐԻ ԼԵՎՈՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Լրացավ մեքենագիտության և ռոբոտատեխնիկայի ասպարեզի ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Լևոնի Սարգսյանի 75-ամյակը:

Յուրի Սարգսյանը ծնվել է 1941 թ. փետրվարի 9-ին Երևանում: 1962 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկամեքենաշինական

ֆակուլտետը: 1964 թ. ընդունվել է Մոսկվայի քիմիական մեքենաշինության ինստիտուտի ասպիրանտուրան՝ "Մեխանիզմների, մեքենաների և ավտոմատ գծերի տեսություն" մասնագիտությամբ: 1967 թ. Մոսկվայի Մեքենագիտության պետական ինստիտուտում ժամկետից 1 տարի շուտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 1975 թ.՝ դոկտորական ատենախոսությունը, երկու տարի անց ստացել պրոֆեսորի գիտական կոչում: 1971-1972 թթ. անցել է գիտական փորձառություն Ստենֆորդի համալսարանում, իսկ 1977-78 թթ. Ստենֆորդի և Իլլինոյսի համալսարաններում աշխատել է որպես հրավիրված պրոֆեսոր:

Սկսելով իր աշխատանքային գործունեությունը Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ասիստենտ, Յուրի Սարգսյանն այնուհետև անցել է փայլուն ուղի. դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, իսկ 1988 թ. ընտրվել է Պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան) ռեկտոր՝ մնալով բուհի ղեկին մինչև 2006 թվականը: Նրան վիճակված էր դառնալ նախաձեռնողն ու գաղափարախոսը Հայաստանում բարձրագույն կրթության կառուցվածքային-ծրագրային արմատական ռեֆորմի, որի նպատակն էր բարձրագույն կրթության համակարգը մերձեցնել ընդունված միջազգային չափանիշներին և հարմարունակ դարձնել այն շուկայական տնտեսության փոփոխվող կարիքներին և պահանջմունքներին:

Յուրի Սարգսյանի անմիջական ղեկավարությամբ Պոլիտեխնիկականը 1992 թ. վերակազմավորվեց Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի

(ՀՊՃՀ) և ԱՊՀ երկրների տարածքում առաջինն անցավ այսօր Բոլոնիայի գործընթացով ամրագրված եռաստիճան կրթական համակարգին՝ ստեղծելով առաջանցիկ իրավական - ծրագրային հիմք՝ իր Գլխավոր պլանով նախատեսված բարեփոխումների համար: 1995թ. ՀՀ կառավարությունը հատուկ որոշումով հավանություն տվեց ավարտված գիտափորձի արդյունքներին, իսկ երկաստիճան բարձրագույն կրթության մոդելը հետագայում օրենսդրորեն ամրագրվեց և ներդրվեց նաև Հայաստանի մյուս բուհերում: Յու. Սարգսյանն էական ներդրում ունի նաև Հայաստանի Ամերիկյան համալսարանի և Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հիմնման գործում: Երկար տարիներ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հոգաբարձուների խորհրդների անդամ է:

Բազմաբեղուն գիտնականը հեղինակ է 175 գիտական աշխատությունների, այդ թվում՝ միջազգային լայն ճանաչում ստացած մենագրությունների, 35 գյուտերի և պատենտների, որոնք նվիրված են մեխանիզմների սինթեզի տեսությանը և ավտոմատացված նախագծմանը, տարածական մեխանիզմների տեսությանը, ռոբոտատեխնիկական համակարգերի մեխանիկային, մեխանիզմների, ռոբոտների և ավտոմատացված համալիրների նոր տիպերի ստեղծմանը: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են մեխանիզմների և մեքենաների տեսության II-X համաշխարհային համաժողովներում, Ամերիկյան ինժեներ-մեխանիկների ընկերության համաժողովներում, տեսական և կիրառական մեխանիկայի, մեխանիզմների և մեքենաների տեսության միութենական համագումարներում, միջազգային այլ գիտաժողովներում:

Ընդհանրացնելով մեխանիզմների սինթեզի դասական երկրաչափական ուղղությունը (Բուրմեստեր-Շյոնֆլիսի տեսություն) շարժման մոտավոր վերարտադրության դեպքի համար, Յու. Սարգսյանը հիմնել է մեխանիզմների սինթեզի տեսության սկզբունքորեն նոր ուղղություն՝ ապրոքսիմացիոն կինեմատիկական երկրաչափություն, որը ստացել է լայն միջազգային ճանաչում, իսկ համապատասխան տերմինը պաշտոնապես ընդգրկվել է մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային տերմինաբանական ստանդարտում:

Ապրոքսիմացիոն կինեմատիկական երկրաչափությունը կինեմատիկական երկրաչափության ինքնուրույն ճյուղ է, որն ուսումնասիրում է շարժման մոտավոր վերարտադրության հետ կապված ապրոքսիմացիոն խնդիրների հատուկ դասը: Ուղղության տեսական հիմունքները շարադրված են հեղինակի "Аппроксимационный синтез механизмов" մենագրությունում (М.: Наука,1982), իսկ նոր տեսական ապարատի հիմքի վրա ստեղծված մեխանիզմների ապրոքսիմացիոն սինթեզի մեթոդաբանությունը և ունիվերսալ ալգորիթմական մեթոդները՝ "Кинематика, динамика и точность механизмов" գրքում (Серия "Основы конструирования машин", М.: Машиностроение, 1984), “Машиностроение” բազմահատոր հանրագիտարանում (гл.3, том 2, М.: Машиностроение, 1995): Այս աշխատություններից առաջին 2-ը ընդգրկված էին

մեխանիզմների և մեքենաների տեսության թեկնածուական մինիմումի պարտադիր գրականության միութենական ցանկում:

Պրոբլեմի կարևորության և սինթեզի հայկական դպրոցի նվաճումների միջազգային ճանաչման մասին է վկայում այն փաստը, որ մեխանիզմների և մեքենաների տեսության համաշխարհային VIII համաժողովի (Պրագա, 1991 թ.) հինգ պլենար նիստերից մեկը նվիրված էր տարածական մեխանիզմների կինեմատիկական սինթեզի ապրոքսիմացիոն խնդիրների վերլուծությանը, երբ հիմնական զեկուցողը Յուրի Սարգսյանն էր: Մեխանիզմների սինթեզում վերջավոր չեբիշևյան մոտարկումների կիրառության ասպարեզում ձեռք բերած խոշոր տեսական արդյունքների համար Յու.Սարգսյանն արժանացել է Ամերիկյան ինժեներ-մեխանիկների ընկերության կողմից 1978թ. լավագույն աշխատանքի համար սահմանված մրցանակին, ինչպես նաև "Պրոկտոր և Գեմբլ" ընկերության հատուկ մրցանակին՝ տեսական արդյունքների կիրառության հեռանկարայնության համար:

Հետազոտական աշխատանքները, որոնք Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում կատարվել են Յու.Սարգսյանի ղեկավարությամբ մեխանիզմների տեսության, ռոբոտ-մանիպուլյատորների մեխանիկայի, պրեցիզիոն վիբրոմեխանիկական համակարգերի, միկրոմանիպուլյատորների, խողովակագլոցման սարքավորման ուսումնասիրության և նախագծման բնագավառներում, պարգևների են արժանացել տարբեր մրցույթներում և ցուցահանդեսներում, կիրառվել հատուկ նշանակության կառավարման համակարգերի ("Ալտաիր" ԳՀԻ), խողովակների սառը գլոցման հաստոնների (Գլազովոյի, Ալմա - Աթայի, Չեպելի ծանր մեքենաշինության գործարաններ), կիսահաղորդչային սարքերի արտադրության ավտոմատացման միջոցների (կիսահաղորդչային տեխնիկայի Երևանի հատուկ նախագծային-կոնստրուկտորական բյուրո) և այլ սարքերի ստեղծման ընթացքում:

Բազմամյա հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքում համալսարանում ստեղծվել է ինչպես ԱՊՀ-ի տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս առավել հայտնի գիտական դպրոցներից մեկը մեխանիզմների և մեքենաների տեսության ասպարեզում: Այստեղ ձևավորվել է շնորհաշատ հայ մեքենագետ-գիտնականների նոր սերունդ: Յու.Սարգսյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ Հայաստանում, Ռուսաստանում,ԱՄՆ-ում,Ուկրաինայում, Ղազախստանում, որտեղ նա ունի բազմաթիվ հետևորդներ: 1995 թվից նա գիտական աստիճանների շնորհման "Մեքենաշինության և մեքենագիտության" 034 մասնագիտական խորհրդի նախագահն է:

Շատ լայն է Յու.Սարգսյանի գիտական հետաքրքրությունների ընդգրկույթը: Կրթական ասպարեզի նշանավոր գործիչը 30-ից ավելի աշխատություններ ունի նաև ինժեներական կրթության մեթոդաբանության, գիտության քաղաքականության,

բարձրագույն կրթության ստրատեգիական պլանավորման, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի տարբեր հիմնահարցերի վերաբերյալ:

Իր ծանրակշիռ գիտական վաստակի համար Յու.Սարգսյանը 1986թ-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996թ-ին՝ իսկական անդամ: 1989 - 2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, 1994 թ-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ:

Ակադեմիկոս Յու.Սարգսյանը վարել է նաև ակտիվ գիտա-հասարակական գործունեություն: 1991 –ից 1995-ը եղել է մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային ֆեդերացիայի (IFToMM) գործադիր կոմիտեի անդամ, իսկ 1998-ից այդ ֆեդերացիայի Հայաստանյան անդամ-կազմակերպության նախագահն է: 1994 թ. ընտրվել է Միջազգային ինժեներական ակադեմիայի թղթակից - անդամ, իսկ 1995թ.՝ իսկական անդամ: Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի քանի գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ է, ՀԱՊՀ “Բանբեր” հանդեսի գլխավոր խմբագիրը: Յու.Սարգսյանը մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային տերմինաբանական ստանդարտի հեղինակներից է, որի հիման վրա 2009թ. ստեղծվել է մեխանիզմների և մեքենաների տեսության անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարանը: Նա ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի անդամ է, ղեկավարում է տեխնիկական գիտությունների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ասպարեզում ՀՀ նախագահի մրցանակի շնորհման հանձնաժողովը:

1995թ. օգոստոսին Միլանում տեղի ունեցած IFToMM-ի IX Համաշխարհային համաժողովում Յու.Սարգսյանին շնորհվել է IFToMM-ի հատուկ մրցանակը՝ մեխանիզմների և մեքենաների տեսության ասպարեզում ակնառու ծառայությունների համար:

Վաստակաշատ պրոֆեսորը 2002թ. արժանացել է Հայ կրթական հաստատության (ԱՄՆ) “Տարվա լավագույն կրթական գործիչ” մրցանակին, 2006թ. ընդգրկվել է Միջազգային կենսագրական կենտրոնի (Քեմբրիջ, Անգլիա) “Ականավոր 100 կրթական գործիչներ - 2006” անվանակարգում: 2007թ. արժանացել է “21-րդ դարի 2000 ականավոր ինտելեկտուալներ” դիպլոմի (միջազգային կենսագրական կենտրոն, Քեմբրիջ): 2008թ. արժանացել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչման:

Յու.Սարգսյանը նաև ճանաչված հասարակական և պետական գործիչ է: 1990-1995 թթ. եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և Սահմանադրական հանձնաժողովի անդամ, իր ներդրումն ունենալով Հայաստանի Անկախության հռչակագրի, ՀՀ առաջին սահմանադրության, կրթության և գիտության վերաբերյալ օրենքների մշակման գործում: Նրա առաջարկությամբ է, մասնավորապես, ձևակերպվել և ընդունվել Հայաստանի Անկախության հռչակագրի՝ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը Հայաստանի սատարումն ամրագրող 11-րդ կետը: Իր մեծ ծառայությունների համար Յուրի Սարգսյանը պարգևատրվել է ՀԽՍՀ “Պատվո նշան”

շքանշանով (1985թ.), ՀՀ “Անանիա Շիրակացի” մեդալով (1999թ.), ՀՀ “Սուրբ Մեսրոպ Մաշտոց” շքանշանով (2003թ.), ԼՂՀ “Երախտագիտություն” մեդալով (2008թ.), ՀՀ վարչապետի Ոսկե մեդալով (2011թ.), իսկ 2011 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Պոլիտեխնիկն առանձնահատուկ տեղ է ունեցել Յուրի Սարգսյանի կյանքում: Սկսած 1957-ից, արդեն ավելի քան 58 տարի, նա ամենատարբեր թելերով կապված է իր Ալմա Մատերի հետ: Այստեղ է նա ձևավորվել որպես մասնագետ, մեքենագետ-գիտնական, կրթական և հասարակական ասպարեզների գործիչ: Պոլիտեխնիկի սանին եզակի առաքելություն էր վիճակվել՝ ղեկավարել հարազատ բուհը անցումնային դժվարին շրջանում, դառնալ նրա կրթական համակարգի արմատական փոփոխությունների նախաձեռնողն ու շարժիչը, ստեղծել հեռահար ռազմավարություն վերակազմակերպված բուհի կայուն զարգացման և միջազգայնացման համար:

*Խմբագրական խորհուրդը շնորհավորում է **Յուրի Լևոնի Սարգսյանին** հոբելյանի առթիվ, ցանկանում քաջառողջություն, երկարակեցություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:*